

Մ
1123

18.00.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻ ՄԱՇՀԱԴԻ

**ԱՐԱՔ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆ ՈՒ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՋԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1796 – 1925թթ.)**

ԺԸ.00.01- « Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
АРМЕНИИ

АЛИ МАШХАДИ

**ИСТОРИЧЕСКАЯ ЧАСТЬ ГОРОДА АРАК И КОМПОЗИЦИОННЫЕ
ОСОБЕННОСТИ ПАМЯТНИКОВ В ГАДЖАРСКИЙ ПЕРИОД (1796-1925гг.)**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по
специальности 18.00.01- "Архитектура"

ЕРЕВАН 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Դ. Գ. ՔԵՐՄԵՆՆԶՅԱՆ
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտարապետության դոկտոր
Լ.Վ.ԴՈՒՆԻՍԻԱՆՅԱՆ
ճարտարապետության թեկնածու, դոցենտ
Զ.Յ.ՄԱՍՅԱՆ
Առաջատար կազմակերպություն՝ ճարտարապետության ազգային
բանձարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 3-ին ժամը 14⁰⁰-ին
ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին
կից գործող ՀՀ ԲՈՂ-ի 030 «ճարտարապետություն և շինարարություն» մասնագիտական
խորհրդում: Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ., 105:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի գիտական գրադարանում:
Հասցեն՝ 0009, ք. Երևան, Մառի փ., 17/1:
Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am:
Սեղմագիրն առաքված է 2015թ. ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
ճարտարապետության թեկնածու, դոցենտ


Ս.Ա.ԹՈՎՄԱՅԱՆ

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и
строительства Армении

Научный руководитель: доктор архитектуры, профессор
КЕРТМЕНДЖЯН Д.Г.
Официальные оппоненты: доктор архитектуры
ДОЛУХАНЫАН Л.К.
кандидат архитектуры, доцент
МАМЯН З.Г.

Ведущая организация: Национальный музей-институт архитектуры.
Защита диссертации состоится 3-го июня 2015г. в 14⁰⁰ часов на заседании
Специализированного совета 030 – «Архитектура и строительство» ВАК РА,
действующего при Национальном университете архитектуры и строительства
Армении по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАКА по адресу: 0079,
г. Ереван, ул. Марра, 17/1.
С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАКА:
www.nuaca.am
Автореферат разослан 30-го апреля 2015 г.

Ученый секретарь Специализированного совета:
кандидат архитектуры, доцент



11-1123


ՏՕՄՄԱՅՅԱՆ Տ.Ա.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեման Արաք քաղաքի պատմական հատվածի
քաղաքաշինության և շինարվեստի հետազոտությունն է և իսպահան (սեֆյան) ոճի հետ
համեմատական վերլուծությունը:

Ուսումնասիրության առարկան ընդգրկում է Արաք քաղաքի քաղաքաշինական
համակարգի հորինվածքային վերլուծությունը, նրա բաղկացուցիչ տարրերի
ներդաշնակության միջոցները՝ շենքերի տիպաբանություն բնութագրումը,
ճարտարապետական փոքր ձևերի, դեկորատիվ միջոցների ու զարդարվեստի
առանձնահատկությունների բացահայտումը:

Ատենախոսության արդիականությունը: Պատմական Արաքի հատվածը քաջարյան
շրջանի առաջին քաղաքն էր, որը նախագծի հիման վրա է կառուցվել: Ուստի տվյալ
պատմական հատվածի առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ որպես
քաջարյան Իրանի ոչ օրգանիկ (զարգացման շրջան չանցած) առաջին քաղաք, կարևոր
նշանակություն ունի Իրանի ճարտարապետության և քաղաքաշինության պատմության
համար: Արաքի պատմական հատվածը՝ պատմական շուկան, քաղաքի առևտրական
առանցքն է, ուստի նշված հատվածի առանձնահատկությունների ուսումնասիրությունը
և վերլուծությունը հիմք կհանդիսանան Արաքի բարեկարգման և զարգացման
նախագծերի մշակման համար, ինչպես նաև կարևոր դեր կունենան Արաքի
քաղաքաշինական կարգավորման խնդիրների հարցում: Արաքի պատմական հատվածը
քայքայման և ավերվածության եզրին է գտնվում: Վերջին տարիների ընթացքում
կառուցելով նորաճ շինություններ՝ Արաքի պատմական կառույցների կողքին
առաջացել է քաղաքաշինական բարդ խնդիր: Ուստի պատմական հատվածի
վերանորոգումը և վերակառուցումը հույժ անհրաժեշտ է, հետևաբար, կարևոր է այդ
հատվածի առանձնահատկությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը: Առկա
են, է. Շիեի, Ա. Ղադայանի, Ա. Մալեք Հոսեյնի կողմից կատարված գիտական
աշխատանքներ, որոնք ներառում են հատակագծերի սկզբնական չափագրումը,
պատմական կառույցների նկարագրական ուսումնասիրությունը, սակայն Արաք
քաղաքի պատմական հատվածի և հուշարձանների առանձնահատկությունների
որոշում, մասնագիտական և հատուկ ուսումնասիրություն չի կատարվել:

Ատենախոսության նպատակն է՝
Կատարել Արաք քաղաքի պատմական հատվածի քաղաքաշինական ճարտա-
րապետական և ոճաբանական վերլուծությունը, բացահայտել նրանց հորինվածքային
առանձնահատկությունները և մշակել գիտականորեն հիմնավորված համեմարա-
կաններ, նրանց հետագա պահպանման համար:

Ըստ դրված նպատակի սույն ուսումնասիրության հիմնական խնդիրներն են՝
▪ Վեր հանել պատմաաշխարհագրական և լանդշաֆտային առանձնա-
հատկությունները

- Բացահայտել քաղաքաշինական հորինվածքային առանձնահատկությունները
- Ուսումնասիրել պատմական հատվածի հուշարձանների տիպաբանական առանձնահատկությունները և տալ նրանց դասակարգումը
- Վերլուծել պատմական հատվածի հուշարձանների շինարվեստի սկզբունքները
- Կատարել պատմական հատվածի, հուշարձանների տիպաբանական վերլուծություն, բացահայտելով՝ նրանց ոճաբանական պատկանելիությունը:

Ատենախոսության աշխարհագրական և ժամանակագրական սահմանները

ընդգրկում են Արաք քաղաքը և նրա շրջակայքը: Պատմական էքսկուրսների և զուգահեռների անցկացման միջոցով ուսումնասիրության մեջ ներառվել են նաև համաիրանական և իսլամական ճարտարապետության օրինակներ: ուսումնասիրությունը պատմական տեսանկյունից հիմնականում վերաբերում է Իրանի քաջարական ժամանակաշրջանին, որն ընդգրկում 1796-1925 թվականները:

Հետազոտության մեթոդները.

1. օգտագործվել է ընդհանուրից դեպի մասնավորն անցման (հերարխիայի) եղանակը՝ Արաքի պատմական հատվածի քաղաքաշինական առանձնահատկությունների վերլուծության համար:
2. Տիպաբանության և պատմական կառույցների դասակարգման նպատակով կիրառվել է նկարագրական վերլուծության եղանակը:
3. Կատարվել է Արաքի պատմական հատվածի կառույցների և իսպահան ոճերի սկզբունքների համեմատական վերլուծություն:
4. օգտագործվել են AutoCAD, Word, Photoshop և Excel համակարգչային ծրագրերը:

Ատենախոսության նորույթը. ատենախոսության մեջ առաջին անգամ՝

- Բացահայտվել են Արաքի պատմական հատվածի քաղաքաշինական հորինվածքային առանձնահատկությունները.
- Վերլուծվել են Արաքի պատմական հատվածի հուշարձանների շինարվեստի սկզբունքները.
- Ուսումնասիրվել են Արաքի պատմական հատվածի հուշարձանների տիպաբանական առանձնահատկությունները և տրվել են նրանց դասակարգումը.
- Կատարվել են Արաքի պատմական հատվածի հուշարձանների տիպաբանական վերլուծությունը.
- Ապացուցվել է Արաքի պատմական հատվածը ոչ միայն կրում է Թեհրանի ոճի ազդեցությունը, այլ բավականին Իսպահանի ոճի ազդեցության տակն է եղել:

Ատենախոսության փորձաքննությունը և արդյունքների ներդրումը.

Քանի որ հետազոտությունն ունի գիտական և կիրառական նշանակություն, այն կարող է օգտագործվել Իրանի բոլոր ճարտարապետական բուհերում՝ որպես ուսումնական նյութ, Արաքի քաղաքապետարանում, ինչպես նաև քաղաքաշինության նախարարությունում և «Զբոսաշրջության և մշակութային ժառանգության» հիմնարկում:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրվածությունը և օգտագործված գրականությունը.

Արաք քաղաքին և նրա ճարտարապետական ժառանգությանը նվիրված համապարփակ աշխատություն դեռևս չկա: Այն կատարվել է ներկայացվող ատենախոսությունում: Մինչ այսօր Արաք քաղաքի պատմաճարտարապետական ժառանգությունը՝ որպես իրանական ճարտարապետության ուշագրավ հուշարձան, ընդգրկվել է ընդհանուր ճարտարապետական գիտական հետազոտություններում կամ էլ որպես զուգահեռաբար ներկայացվող նյութ՝ տարբեր ուսումնասիրությունների ենթատեքստում: Այնուամենայնիվ, կան որոշ ուսումնասիրություններ, որոնք մեկնաբանում են Արաք քաղաքի պատմաճարտարապետական ժառանգության այս կամ այն դրույթները: Այդ թվում են.

Արաք քաղաքի պատմաաշխարհագրական ուսումնասիրությունները,

Արաքի պատմագրական ուսումնասիրություններ քաջարական ժամանակաշրջանում, Արաք քաղաքի վերաբերյալ քաղաքաշինական ուսումնասիրություններ, որոնցից հատկապես կարևորվում է Shieh Esmail-ի «Արաքի հին քաղաքամասի ուրբանիզացման արվեստը» (Թեհրան, 1998թ.):

Արաք քաղաքի հուշարձանների տիպաբանական ուսումնասիրությունների թվում են Arse Consultation Engineer գրասենյակի «Արաք քաղաքի հատակագծի իլյուստրատիվ մեկնաբանումը» (Արաք, 1985թ.), ինչպես նաև Parsi Faramarz-ի ատենախոսությունը նվիրված «Ճակատային հորինվածքը քաջարական ժամանակաշրջանում» թեմային (Թեհրան, 2008թ.):

Ճարտարապատական հուշարձանների հորինվածքային և շինարվեստին վերաբերող ուսումնասիրություններ:

Աշխատանքի համառոտ քվանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է

նախաբանից, երեք գլխից, համապատասխան եզրակացություններից, ընդհանուր եզրակացություններից, 83 ամուն օգտագործված գրականության ցանկից, և հավելվածից՝ բաղկացած գծագրերից, աղյուսակներից, քարտեզներից, սխեմաներից և լուսանկարներից: Ատենախոսությունը բաղկացած է 126 էջ տեքստային մասից և 87 աղյուսակից:

ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՔ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ

ՉՈՐԻՆՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ բնակավայրի հատակագծումը, կառուցապատումը և առկա շենքերի հորինվածքները ուղղակիորեն կապված են տվյալ տարածքի լանդշաֆտի, բնության, կլիմայի, բնակչության շերտերի, հավատալիքների և անցած պատմական ժամանակաշրջանների պարբերացման առանձնահատկությունների հետ: Այս նկատառումներով առաջին գլխի սկզբում անդրադարձ է կատարվում Արաքի պատմաաշխարհագրական տվյալներին:

Քաղաքը գտնվում է կենտրոնական Իրանի տարածքում՝ ծովի մակերևույթից հազար հինգ հարյուր մետր բարձրության վրա: Տեղանքը լեռնային է, հյուսիս-արևելքում՝ անապատային: Անապատի և Ջագրոսյան լեռների միջև տեղակայված է Աղի լիճը: Կլիման չոր է և ցամաքային ուժեղ քամիներով:

Պատմականորեն Արաք քաղաքի տարածքում կան բրոնզեդարյան ժամանակաշրջանից մինչև Աբեմեյան և Սասանյան դարերը հասնող հնագիտական շերտեր: VIII դ. Արաքը նվաճվում է Արաբական խալիֆայի կողմից: Այս շրջանում կառուցվում է Սուլթանաբադի ամրոցը, որն ավելի ուշ՝ քաջարական ժամանակաշրջանի սկզբում՝ XVIII դ. ընդարձակվում է՝ վերածվելով ութ ամրոց ունեցող պաշտպանական համակարգի: Սուլթանաբադի վերածումը քաղաքի և դրանից բխող հատակագծումն ու ընդարձակումը կատարվել են երեք հաջորդական փուլով:

Արաք քաղաքի ներկայումս գոյություն ունեցող կառուցապատման զարգացումը պարբերացվում է երեք ժամանակաշրջանի: Դրանք են՝ 1. Դաջարական ժամանակաշրջանի քաղաքը (1796-1925թթ.), 2. Պահլավիդյան ժամանակաշրջանի ընդարձակումը (1925-1978թթ.), 3. 1978 թվականից մինչև օրս կատարված քաղաքաշինական ծավալումը:

Քաղաքի զարգացման առաջին փուլն ընդգրկում է 1796թ. հետո և 1812-ից մինչև 1850 թվականները: Այդ ժամանակահատվածում այն 600 x 800 մետր չափերով պարսպապատ ավան է եղել, որ երկու փոխհատվող պողոտաների միջոցով բաժանվել է չորս թաղամասի: Քաղաքի կենտրոնում տեղակայված է առևտրահասարակական համալիրը: Պողոտաների սկզբամասում քաղաքային դարպասներն են, հյուսիս-արևմտյան անկյունում՝ Արգ կոչվող ամրոցը: Ջարգացման այս փուլին են վերագրվում նաև ուղղանկյուն բերդաքաղաքը շրջապատող հին արվարձանները, որոնք, ի տարբերություն բերդաքաղաքի կառուցապատմանը, ունեն շառավղաշրջանաձև հատակագծում:

Երկրորդ փուլում, որ ներառում է 1850-ից մինչև 1925 թվականները, կատարվել է քաղաքի ընդարձակումը հին արվարձաններով, որը հատակագծման տեսակետից շարունակում է հին արվարձանների կառուցապատման օրինաչափությունները:

Հաջորդ կամ երրորդ ընդարձակման փուլը, քաղաքի նոր կառուցապատումն է, որն իրականացվել է առանձին, կանոնավոր հատակագծմամբ, սակայն տեղանքին հարմար դասավորություն ունեցող արվարձաններով:

Վերը նկարագրված Արաք քաղաքի հատակագծային հորինվածքը կարելի է բնութագրել որպես օրգանական ճարտարապետական սկզբունք, չնայած, որ այն կենտրոնական մասում ունի իդեալական քաղաքաշինական հորինվածք:

Գլխում, սահմանված կարգով, մեկնաբանվում է քաղաքի ճանապարհային ցանցի համակարգը, ուրվագիծը, ներքին հրապարակների տեղաբաշխումը: Փաստորեն Արաք քաղաքի դոմինանտը ամրոցն է, հորինվածքի կենտրոնը՝ շուկայական համալիրն ու հին բերդաքաղաքը: Հատակագծման գլխավոր առանցքները, սկիզբ առնելով շուկայական համալիրի կենտրոնից, փոխադրահայաց ձգվում են դեպի քաղաքի նոր արվարձանները և աստիճանաբար ստանում են շառավղային ուղղվածություն:

Արաքի կառուցապատման ենթատեքստում այսօր առկա են բազմաթիվ տարածքներ, համալիրներ և առանձին շենքեր, որոնք հուշարձան են հայտարարված: Նշվածների թվում են առևտրահասարակական համալիրը (բազարը), ամրոցը և Շոհադա հրապարակը: Քաղաքի հին կառուցապատման մեջ՝ բերդաքաղաքի հատվածում, կան թվով քառասունչորս հուշարձան հայտարարված կառույցներ, իսկ արվարձաններում դրանց թիվը հասնում է տասնվեցի:

Հուշարձանները կարելի է տեսակավորել հետևյալ խմբերում. պաշտամունքային շենքեր (մեղեսեներ և մզկիթներ), բնակելի շենքեր (տներ և ապարանքներ), մեմորիալ կառույցներ (դամբարաններ և տեքիեներ), կոմունալ և արտադրական կառույցներ (բաղնիքներ, առևտրական շարքեր, առևտրական բակեր, ծածկված և բակավոր քարավանատներ, աշտարակներ, ջրամբարներ), վարչական և հասարակական շենքեր և այլն:

Արաք քաղաքի առևտրահասարակական համալիրն ունի բջջային կառուցապատում, որը կազմված է հաջողական հրապարակներից և մասնագիտացված առևտրական շարքերից: Քաղաքի կառուցապատման ենթատեքստը քաջարական շրջանի թաղամասերն են:

Վերը նշված հասարակական և այլ շենքերը լայնամասշտաբ են, մինչդեռ թաղամասերի հասարակ բնակելի տները մեկ-երկու հարկանի, բնական մասշտաբով իրականացված, դարավանդաձև զանգվածներ են:

Ուշագրավ է թաղամասերի կառուցապատման հարմարեցվածությունը հասարակական կորիզի հետ, որը բնակավայրին հաղորդում է հորինվածքային համահնչունություն: Որքան էլ թաղամասերը հիմնականում կառուցապատվել են

բնակելի շենքերով, այնուամենայնիվ, տնամերձ սպասարկման կառույցներն իրենց մասշտաբով, աստիճանավորում են մտցնում քաղաքի ուրվագծի պատկերում: Այսօր քաղաքի ուսումնասիրված հիմ կառուցապատման չորս թաղամասում կան քառասունվեց շենքեր, որոնք հուշարձան են հայտարարված: Նման քսաներկու շենք կա նաև արտաքին կամ նոր քաղաքում:

Արաքի դաջարական ժամանակաշրջանի կառուցապատումն ունի վանդակավոր համակարգ: Այն կազմված է միջնաբերդից, նրա հարավարևելյան կողմում տարածավող ուղղանկյուն պարասպաստ քաղաքից, ինչպես նաև բերդաքաղաքի շուրջ ծավալվող արվարձաններից: Քաղաքի կենտրոնի գլխավոր տարրը բազարային համալիրն է, որ երկու գլխավոր պողոտաների միջոցով անմիջապես կապվում է չորս թաղամասերի հետ: Այսպիսով, ստացվում է, որ բերդաքաղաքի հորինվածքը կանոնավոր դասավորված հրապարակների ամֆիլադ է: Փաստորեն, բերդաքաղաքի դոմինանտը հյուսիս- արևմտյան անկյունի ամրոցն է, որն ամրոցատակ հրապարակի միջոցով համադրվել է առևտրահասարակական համալիրին:

1-ին գլխի եզրակացություններ. ըստ հորինվածքային տեսության վերլուծելով քաղաքի կառուցապատման գոտիավորումը և քաղաքային տարածքի հատակագծումը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Արաք քաղաքի լանդշաֆտը ներդաշնակ է լեռնային բնակալիմայական առանձնահատկություններին, որտեղ բնակավայրի ուրվագիծը կրկնում է շրջակա ռելիեֆի ուրվագիծը՝ որպես կոմպլիմենտեր լրացնելով նրա գունային և ֆակտուրային առանձնահատկությունները:

2. Արաք քաղաքի հիմնական քաղաքաշինական հայեցակարգը պաշտպանական համակարգի ստեղծումն ու առևտրական ճանապարհներին մոտ լինելու հանգամանքն է: Արաք քաղաքի հորինվածքային համակարգում միջնաբերդը հանդիսանում է հիերարխիան, հորինվածքի կենտրոնը առևտրահասարակական համալիրն է, առանցքները փոխուղղահայաց պողոտաների ուղղությամբ են, իսկ կառուցապատման ենթատեքստը բնակելի թաղամասերն են: Փողոցների ցանցը դասական, կանոնավոր հատակագծման սկզբունքով է: Ի տարբերություն բերդաքաղաքի՝ արվարձանները ունեն ազատ, շառավղաշրջանաձև ճյուղավորում:

3. Քաղաքաշինության տեսանկյունից, պաշտպանական պարիսպների հատակագծման մեջ նկատի են առնվել նաև ամրոցի և պարսպամեջ տարածության փոխադարձ մատչելիությունը, ինչպես նաև կենսական պայմանների ապահովումը, այդ թվում՝ մթերքը և ջրամատակարարումը, այսինքն՝ քաղաքն ունեն ջրի պաշարների քողարկված մաս: Բերդաքաղաքի և ամրոցի փոխոցները կառուցվել են ջրի պաշարների մատչելիության հիման վրա:

4. Քաղաքի հատակագծման ծավալատարածական բաժանման մեջ կարևոր գործոն է նաև բնակչության շերտավորումը: Կենտրոնում իշխանական կամ ազնվական խավի թաղամասն է՝ համադրված բերդաքաղաքի չորս թաղամասի հետ: Քաղաքի հորինվածքը անտիկ ավանդների շարունակության վրա ձևավորված միջնադարյան գոտիավորումն է, որտեղ հորինվածքի կենտրոնը առևտրահասարակական համալիրն է և նրա շուրջը երկու ուղղահայաց փոխհատվող պողոտաների առանցքով տեղադրված չորս թաղամասը: Վարչական ենթամասը առևտրահասարակական կենտրոնի առանձնացված շարունակությունն է: Այս կառուցվածքն ընդունված է անվանել քառանկյունաձև սխեմա:

5. Կառուցապատված առևտրահասարակական համալիրը գտնվում է պողոտաների հատման վայրում, որտեղ անմիջապես համալիրի հարավային մասում տեղադրված Շոհադա հրապարակը ներդաշնակության մեջ է բերդատակի, ինչպես նաև թաղամասի մյուս հրապարակների հետ: Փաստորեն, բերդաքաղաքը հիմ արվարձանների հետ միասնական հորինվածք է դառնում պողոտաների շարունակության վրա ձևավորված դարպասամերձ հրապարակների միջոցով:

6. Արաք քաղաքի հատակագծման մեջ բացահայտորեն կիրառված է հորինվածքի հիերարխիայի ներդաշնակեցման մեթոդը, որտեղ այսօր հուշարձանների առավելագույն մասը՝ մոտ ութսուն տոկոսը, գտնվում է բերդաքաղաքի տարածքում, իսկ մնացած քսանը՝ հին արվարձանների տարածքում: Ընդ որում, ակնարկվող հուշարձանները հիմնականում տեղաբաշխված են սահմանված գլխավոր պողոտաների երկու կողմում: Քաղաքական հուշարձանների քառասունհինգ տոկոսը գտնվում է պողոտաների և Շոհադա հրապարակի շուրջը և ունի առևտրական նշանակություն: Մի հանգամանք, որ ապացուցում է քաղաքի առևտրական նշանակությունը, ինչը մինչև օրս էլ պահպանել է իր արդիականությունը:

7. Արաք քաղաքի հիմ կառուցապատման փողոցների ցանցը եռաստիճան է: Պողոտաները լայն են և ունեն կենտրոնական դիրք: Դեպի թաղամասերի հրապարակներ ձգվող փողոցներն ավելի նեղ են, իսկ թաղամասերի հրապարակներից դեպի բնակեցված տարածքներ ձգվող փողոցները՝ էլ ավելի նեղ:

8. Քաղաքաշինական առանձնահատկությունների տեսանկյունից Իսպահանի ոճն առավելագույն ազդեցություն է ունեցել Արաքի պատմական հատվածի վրա:

■ Իսպահանի ոճի մեջ քաղաքն ունի կանոնավորված նախագիծ: Արաքի պատմական հատվածը չի ազդվել օրգանական քաղաքաշինական հորինվածք ունեցող Թեհրանի ոճից, այլ ազդվել է Իսպահանի ոճից և ունի կանոնավորված նախագիծ:

■ Արաքի պատմական հատվածում բնակելի թաղամասերն ունեն Իսպահանի ոճի նման կառուցվածք, այսինքն՝ թաղամասերը միմյանցից առանձնացվում են սահմանագծով: Թեհրանի ոճի մեջ բնակելի թաղամասերն չունեն գործառնության կատարյալ անկախություն:

ԳԼՈՒԽ 2: ԱՐԱՔ ՔԱՂԱՔԻ ՔԱՏԱՐԱԿԱՆ ՀՈՒՆԱՐՉԱՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՉԱՆՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արաք քաղաքի քաջարական հուշարձանները հիմնականում բաժանվում են վեց տիպաբանական խմբի: Դրանցից յուրաքանչյուրը փաստագրվել, ուսումնասիրվել է և արդյունքում դասակարգվել:

ա/ Պաշտամունքային շենքեր. սրանք իսլամական քաղաքի կերպարը ստեղծող կառույցներ են: Ցավոք, գոյություն ունեցող բազմաթիվ օրինակներից միայն երկուսն են այսօր անաղարտ մնացել՝ Սեփհադարի մեդեսեն և Շեյխ Աբուլհասանի մզկիթը: Մնացածները արդիականացվել են և կորցրել են իրենց տիպաբանական առանձնահատկությունները:

Սեփհադարին 19-րդ դարի իրանական տիպի կրոնական դպրոց է: Այն բակավոր կառույց է՝ աշխարհի չորս կողմերի նկատմամբ տեղադրված այվաններով և դրանց միջև գտնվող սենյակներով: Այդ կողմերից հարավայինում տեղադրված է մզկիթը, մինչդեռ Շեյխ Աբուլհասանի մզկիթը կենտրոնական գմբեթաձև սրահով համակառույց է, որ հարավարևմտյան անկյունում ունի մինարեթի աշտարակ: Փաստորեն, քաջարական բոլոր պաշտամունքային շենքերն ունեն նկարագրված կառույցների նույն առանձնահատկությունը, որտեղ դոմինանտը գմբեթավոր մզկիթն է:

բ/ Հասարակական շենքեր. Արաք քաղաքի կենտրոնի հասարակական շենքերի մեջ գերիշխում են ծածկված (տիմչե) և բակավոր (սարայ) քարավանատները և առևտրական բակերը: Գլխում մանրամասն վերլուծվել են Նախշինե, Տիմչեն, Քետաբֆորուշա, Ակբարյան, Կաշանի, Նոզարի, Տաղավի սարայները: Յուրաքանչյուր համակառույց վերլուծվել է ըստ գլխավոր հատակագծի, ճակատների, կտրվածքների, ծավալատարածական ձևի:

գ/ Բնակելի շենքեր. հիմնականում երկու-երեք հարկանի բնակարաններ են տեղադրված թաղամասերի փողոցների երկու կողմում: Դրանք Արաք քաղաքի կառուցապատման ենթատեքստն են կազմում: Այստեղ հասարակական և այլ տիպի շենքերը լայնամաշտաբ են, իսկ բնակելի տներն ավելի մոտ են բնական մասշտաբին: Գոյություն ունեցող բազմաթիվ բնակելի շենքերը խմբավորվել են երեք տարբերակների՝ ծածկված բակով, ատրյունային և հրապարակաձև հորինվածքով, այսինքն, եթե առաջին երկուսը չորս կողմից ունեն փակ կառուցապատում, ապա վերջինս կառուցապատված է միայն երկու կամ երեք կողմից, իսկ մյուս կողմով ցանկապատված է: Առաջին խմբի օրինակներից է Խակբազի, երկրորդը՝ Հասանպուրի, իսկ երրորդը Հաջաղա Մոհսեն Արաքի բնակարանները: Բակերի առանցքներով այդ բնակարանները կանոնական կարգով սիմետրիկ են:

դ/ Կուռուռայ շենքեր. այս տիպի շենքերից ներկայումս պահպանվել է միայն երկու բաղնիք: Քաղաքում եղած բազմաթիվ նմանատիպ շենքեր վերացել են իրենց արդիականությունը կորցնելու հետևանքով: Գլխում մանրամասն ուսումնասիրվել են

Սաֆայի և Չահարֆասլի հասարակական բաղնիքները: Դրանցից առաջինն ունի միադահլիճ հորինվածք, իսկ երկրորդը՝ բազմադահլիճ: Ըստ նկարագրի Արաք քաղաքի բաղնիքները համեմատաբար բարձր են, քան իրանական մյուս օրինակները, դրանք ավելի ընդարձակ են և իսլամական բաղնիքներից տարբերվում են իրենց գունազեղությամբ:

ե/ Մեմորիալ շենքեր. ճշված տիպի շենքերը բնորոշ լինելով արևելյան քաղաքների առևտրահասարակական համալիրների կառուցապատմանը՝ Արաք քաղաքի օրինակում պարզագույն ուղղանկյուն կառույցներ են և լուծված են որպես աղբյուրներ (Սաքա-խանա): Ուշագրավ են այդ աղբյուրների խճանկարված ճակատային լուծումները: Պահպանված բազմաթիվ օրինակներից ատենախոսության մեջ վերլուծվել են Հազրեթ Աբուֆազլի, Սոհանեղ Էբրահիմի և մուլլա Դասեմի մեմորիալ աղբյուրները:

զ/ Ճարտարապետական փոքր ձևեր. Արաք քաղաքի առևտրահասարակական կենտրոնը, լինելով բավականին բարեկարգ, նրա մոլորների կենտրոնական մասերում տեղաբաշխվել են ճարտարապետական փոքր ձևեր, որոնք միշտ էլ համադրված են գեղեցիկ նկարվածք ունեցող ավազաններով: Ատենախոսության մեջ այդ ավազանները տիպավորվել են ըստ իրենց պարագծի՝ կոհերենտ և սիմետրիկ հատակագծային լուծումների, որոնցից հատկապես ուշագրավ են շուկայի հրապարակի Չահարֆասլ բաղնիքի և Նոզարի սարայի ավազանները:

Տիպաբանվել են Արաքի պատմական շենքերի ճարտարապետական տարրերը՝ գլխավոր հատակագծերը, ճակատները, ծավալներն ու ներսույթը, դրանից հետո, դասակարգվել են յուրաքանչյուր տիպին պատկանող շենքերը: Վերլուծվել են պաշտամունքային, հասարակական, բնակելի, կոմունալ, մեմորիալ և ճարտարապետական փոքր ձևերի խմբերի հորինվածքային առանձնահատկությունները և հանգել ենք վերջնական եզրակացությունների:

Արաքի պատմական հատվածի հորինվածքային առանձնահատկությունների վերլուծությունը բաժանվում է 3 խմբի

ա) Այն առանձնահատկություններն են, որոնց շնորհիվ շինության մեջ ստեղծվում է ներդաշնակություն և շատ կարևոր դեր են խաղում կառույցի տարրերի և մանրամասների միջև հավասարակշռություն պահպանելու հարցում: Առաջին խումբը ներառում է հիերարխիան, առանցքները, ձևի ներդաշնակությունն ու շինության հետ երկնքի կազմած գիծը:

բ) Երկրորդ խումբը ներառում է կառույցի կազմակերպող տարրերի և ձևերի բնականից ընձեռված հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք են՝ դյուրաթեքությունը, գույնը, լույսը, ստվերը և հորինվածքը: Նշված գործոնները շատ կարևոր դեր են խաղում կառույցի մեջ միաձուլություն ստեղծելու հարցում:

գ) Երրորդ խմբի մեջ ընդգծված են կառույցում կարգ ստեղծող գործոնները, որոնք են՝ ոլորտը, երկրաչափությունը, համաչափությունն ու մասշտաբը: Նշված գործոնները

շատ կարևոր դեր են խաղում կառույցում տեսողական պարզություն ստեղծելու հարցում:

2-րդ գլխի եզրակացություններ.

1. Ուսումնասիրելով Արաքի պատմական հուշարձանների նախագծերի տիպաբանական առանձնահատկությունները՝ արվել են հետևյալ եզրակացությունները.

- Արաքի պատմական շենքեր. բաժանվում են 4 տիպի՝ բլուկային, կենտրոնական բակ ունեցող, բլուկային և կենտրոնական բակի համակցության, բազմաբակային: Հասակագծերից շատերի մեջ նկատվում են տիպերից երկուսը՝ բլուկայինը և կենտրոնական բակ ունեցողը:

- Պաշտամունքային շենքեր. այս տեսակի շենքերի հատակագծման մեջ օգտագործվել է կենտրոնական բակը: Մեծ ու փոքր պաշտամունքային շենքերն ունեն բլուկային հատակագիծ:

- Հասարակական շենքեր. հատակագծերը բաժանվում են 3 տիպի՝ բլուկային, կենտրոնական բակ ունեցող, բլուկային և կենտրոնական բակի համակցությամբ: Հասարակական շենքերից շատերն ունեն բլուկային տիպաբանություն: Կենտրոնական բակի և բլուկային տիպերի համակցությունը միայն իրականացվել է հասարակական շենքերում:

- Բնակելի շենքեր. ունեն բլուկային, կենտրոնական բակի և բազմաբակային տիպաբանություն: հաշվի առնելով, որ դրանցից շատերն ունեն բլուկային հատակագիծ: Փոքր չափերով բնակելի շենքերն ունեն բլուկային տիպաբանություն, միջին չափսերով բնակելի շենքերը՝ կենտրոնական պատի կառուցվածքով տիպաբանություն, իսկ մեծ մասշտաբով կառուցված շենքերը բազմաբակային են:

- Կոմունալ շենքեր. ունեն բլուկային տիպաբանություն: Այս խմբում շենքերից շատերը բաղկացած են մի քանի համալիրներից: Համալիրներն ամբողջությամբ առանձին ու անկախ են և իրար հետ չունեն գործառույթային և ձևային կապեր:

- Մեմորիալ շենքեր. ունեն բլուկային տիպաբանություն և հատակագծի զուգաչափ առանցք:

2. Վերլուծելով Արաքի պատմական շենքերի ճակատների տիպաբանական առանձնահատկությունները՝ արվել են հետևյալ եզրահանգումները.

- Արաքի պատմական շենքերի ճակատները, թեհրամի ոճից ազդվելով, ունեն մեկ համաչափության առանցք կամ առանց համաչափության առանցքի են:

- Ճակատային լուծումներն էլ հատակագծային լուծումների մման ունեն համաչափական կարգերով իրականացված կառուցվածք, այսինքն՝ դրանք ունեն սիմետրիկ դասավորությամբ մոդուլային համակարգ: Շենքերի գլխավոր բացվածքները տեղաբաշխված են ճակատների սիմետրիայի առանցքներով:

3. Ուսումնասիրելով Արաքի պատմական հուշարձանների ծավալատարածական տիպաբանական առանձնահատկությունները՝ արվել են հետևյալ եզրակացությունները.

- Ծավալային հորինվածքը հիմնականում խորանարդաձև է: Ուսումնասիրված բոլոր շենքերն էլ պատային համակարգով են, արտաքին մակերեսներում լուծված խուլ եւ թափանցիկ զարբի կամարաշարերով: Ծավալային ճարտարապետության ներդաշնակեցման միջոցներում հիերարխիան գլխավոր դահլիճն է, հորինվածքի կենտրոնը բաց կամ ծածկված է, իսկ առանցքային լուծումը, պայմանավորված լինելով մուտքերով հետ, ուղղված է դեպի աշխարհի չորս կողմերը:

- Շենքերի երկարության և լայնության հարաբերությունը երեքը երկուսի համաչափությամբ է: Մինչդեռ ծավալային առումով լուծվել են ձգված համաչափությամբ: Կառույցների հորինվածքի կենտրոնը գտնվում է լայնական և երկայնական առանցքների հատման կետում:

4. Ուսումնասիրելով Արաքի պատմական շենքերի տարածական հորինվածքի առանձնահատկությունները՝ արվել են հետևյալ եզրահանգումները

- Տարածական հորինվածքների առումով շենքերն ունեն խորանարդաձև կամ ձգված համաչափությամբ լուծում: Բնակելի տների տարածական հորինվածքում արտաքին եւ ներքին մասերն իրարից բաժանված են: Փաստորեն շենքերը դրսից խուլ են և ներսից լուսամուտավոր, որոնք բացվում են դեպի բակը: Հասարակական շենքերում լուսամուտները բացվում են և՛ դեպի դուրս և՛ դեպի ներս:

- Ուսումնասիրված շենքերի ուրվագծային լուծումները հարազատ են հարթ տանիքի առանձնահատկություններին և շատ դեպքերում միասնական լուծում ունեն, իսկ մեծ կառույցներում դրանք դյուրաթեք են և ունեն տարբեր բարձրություններից կազմված ուրվագիծ:

ԳԼՈՒԽ 3: ՂԱՋԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ՄՐԱՔ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱԿԱՆԱՆ ԾԻՆԱՐԿԵՍԸ

Շինարվեստը Ղաջարների շրջանում դասակարգվում է երեք շրջանի.

Առաջին շրջան (1796-1846 թթ.): Այս ժամանակահատվածում կիրառվել են ավանդական շինարարական տեխնիկաներ և շինարարական տեխնիկայի բազմազանությունը ավելի քիչ է եղել, քան Սաֆավիների և Ջանդյեների շրջանում: Կարևորագույն շինարարական տեխնիկաներից մեկը, որը փոխանցվել է Ջանդյեներից Քաջարներին, «ականջակալի» կիրառումն է կառույցի հիմնական տարածության երկու կողմում, որպեսզի այն նվազեցնի արտաքին ուժերի և առաստաղից եկող ուժերի ազդեցությունը պատերին: Շինարարական տեխնիկաներից մեկը, որը Սաֆավիներից փոխանցվել է Ղաջարներին, գմբեթի առանձնացած երկշերտ կառուցապատման տեսակն է և յոթ գույների կիրառումը սալիկապատման արվեստում, թաղերի և գմբեթների կապումը և տաշած աղյուսի կիրառումը:

Երկրորդ շրջան (1846-1881 թթ.): Իրանի ճարտարապետությունը արևմուտքի և արևելքի ճարտարապետության միախառնումն է: Այս ժամանակաշրջանում արևմտյան ճարտարապետության կրկնողությունն է տեղի ունեցել, իսկ շինարարական տեխնիկան կիրառվել է ավանդական ձևով, այնպես որ կարելի է ասել շինարարական տեխնիկան Սաֆավիդների և Չանդիյեների շրջանի շարունակությունն է: Որպես օրինակ, ավանդական շինարարական տեխնիկայից և կիրառվող շինանյութերից են աղյուսը, թրծած աղյուսը, կավը և հավանգը, այս ժամանակաշրջանում որպես առաջին անգամ Իրանի ճարտարապետները կրկնօժիտակելով արևմտյան կառույցները սկսեցին կառուցել հինգհարկանի կառույցներ՝ ավանդական շինանյութերով և տեխնիկայով:

Երրորդ շրջան (1881-1925 թթ.): Այս ժամանակաշրջանը ավանդական ճարտարապետության շարունակությունն է և շինարարական տեխնոլոգիայի առումով կիրառվել է արևմտյան ճարտարապետության տեխնիկան: Կիրառվել է նաև նոր տեխնիկա, օրինակ՝ մեծաթիջք ծածկերը, այսինքն՝ թաղային ավանդական ծածկերի կիրառումը փոխարինվել է լանջավոր ծածկերի կիրառմամբ: Առաստաղներում նախկինում կիրառվում էին կոր թաղեր, սակայն այս շրջանում թեհրան քաղաքի որոշ հատվածներում կարելի է տեսնել միջհարկային ծածկեր, որոնք պահվում են հեծանների միջոցով, որոնք կրող հեծաններն են և միջհարկային ծածկերի հարթությունը դրանց վրա է դրվում: Այսպիսով, պատվող կորերը փոխարինվեցին կտրուկ կորերով, լանջավոր տանիքները փոխարինվեցին կոր տանիքներով, իսկ գիպսային սյուները՝ փայտե սյուներով: Այս շրջանում նաև նոր մոտիվներ ներթափանցեցին եվրոպայի դասական և նեոդասական շրջանից, օրինակ՝ կորնթական գլխասյուների երեք տեսակները, որոնք Դունական կլասիկ շրջանից են, կիրառվեցին Քաջարների ժամանակաշրջանում պատմական կառույցների մուտքային և տերասային հանգույցներում:

Կիրառվող շինարարական տեխնիկան Քաջարների շրջանում, կախված կլիմայական պայմաններից և տեղանքային տեխնիկայից, տարբերվում են: Արաք քաղաքում տարբեր շրջանների ճարտարապետների ներգրավման հետևանքով կարելի է տեսնել երկու կառուցապատման տարբերակ՝ ավանդական և արևմտյան: Արաքի պատմական հատվածը բաղկացած է 4 թաղամասից, որոնք հասարակական և գործառնության տեսանկյունից յուրաքանչյուրն ունի կատարյալ անկախություն, որի պատճառով էլ բոլոր թաղամասերում կարելի է հանդիպել յուրահատուկ շինարվեստի, օրինակ նույն դեկորացիաները տարբեր թաղամասերում իրականացվել են տարբեր եղանակներով:

Քաղաքի կլիմայական ցուրտ պայմանները թելադրում են կառուցապատման մեջ կիրառել այնպիսի շինանյութեր, որ հնարավորինս նվազեցնեն դեպի դուրս ջերմանցատունը: Արաքի ավանդական տների արտաքինը հիմնականում եղել է կավե, ներքին հարդարանքը աղյուսե, իսկ ցանցածև դռներն ու լուսամուտները՝ փայտե: Կավի պես ծանր նյութի կիրառումը որպես արտաքին հարդարանքի, պատերի ու

առաստաղների հիմնական տարր, մի կողմից նպաստել է էներգիայի խնայողությանը, մյուս կողմից՝ բաց ու թեթև գույնի շնորհիվ, ամռանը շենքի բնակիչներին պատսպարել է արևի կիզիչ ճառագայթների ներթափանցումներից, իսկ ծննանը՝ նրա հաստությունը նպաստել է ցուրտ եղանակի առավել սակավ ներխուժմանը: Այս տների առաստաղները հիմնականում կառուցվել են գերաններով և ծածկվել են հարթ եղեգնախուս կամ կավե հարթ շերտերով, որոնք նույնպես նպաստել են էներգիայի պահպանմանը, միևնույն ժամանակ խոչընդոտել են ցուրտ հոսանքների ներխուժմանը:

Տիպաբանվել են կառույցների բաղկացուցիչ մասերը՝ հիմքը, առաստաղը, պատերը, հատակը, կողային արգելանքները, կոնստրուկտիվ կապերը, հանգույցները, կիրառման եղանակները և Արաքի պատմական հատվածի շենքերը դասակարգվել են ըստ տիպերի, այնուհետև արվել են վերջնական եզրակացություններ:

3-րդ գլխի եզրակացություններ.

1. Ուսումնասիրելով Արաքի պատմական հուշարձանների շինարվեստի տիպաբանական առանձնահատկությունները արվել են հետևյալ եզրակացությունները.

- Արաք քաղաքի պատմական կառույցներն ըստ հիմքերի դասակարգվել են չորս տեսակի. դրանցից են կրաբետոնային հիմքեր, քարային հիմքեր (շերտային): Նշանակալին այն է, որ ոչ մի կառույցում քարե և աղյուսե հիմքեր չեն կիրառվել:

- Արաք քաղաքի պատմական կառույցները, ըստ առաստաղների կառուցվածքի, բաժանվում են երեք տիպի: Դորիզոնական և կոր առաստաղները լայն կիրառում են ունեցել բացի երեք դեպքից, մնացած կառույցները լանջավոր տանիքներ չեն ունեցել, հետաքրքիրն այն է, որ բոլոր հասարակական կառույցների տանիքները կորածև են եղել և հորիզոնական տանիք չի կիրառվել:

- Թաղային կոնստրուկցիաները բաժանվում են հինգ տեսակի՝ ահանգ, Թարքին, չորս հատվածով, թեյզե և քալամբու: Արաք քաղաքի պատմական կառույցներում կիրառվել է ահանգ և թայզե, բացի մի դեպքից, բոլոր կառույցները գուրկ են թարքին և քառահատված թաղերից: Արաք քաղաքի պատմական կառույցների թաղերում շինանյութերի շարվածքը կատարվել է երկու տեսակի՝ հռոմեական և խաչածև, սակայն չի կիրառվել լափուշ տեսակը իր կոնստրուկցիաներից եկող ուժերին քիչ դիմադրողականության պատճառով:

- Գմբեթները բաժանվում են հինգ տեսակի՝ գնդային, սուր, քանթիզե, ձվածև և երկշերտ, որոնցից միայն գնդայինը և երկշերտն է կիրառվել Արաք քաղաքի պատմական կառույցներում: Հատկանշական է, որ միայն մի քանի կրոնական կառույցներում են կիրառվել գմբեթներ, միյուս կառույցներում չեն կիրառվել, շինանյութերի շարվածքը գմբեթներում երկու տեսակ է կատարվել՝ շրջանածև և թարքինի, իսկ գծային շարվածքը չի կիրառվել ոչ մի կառույցում:

▪ Պատերը, ըստ կիրառվող շինանյութերի, բաժանվում են՝ կավային, թրծած կավային, աղյուսե, քարե և փայտե տեսակների: Արաք քաղաքի գրեթե բոլոր պատմական կառույցներում կիրառվել են աղյուսե և կավե պատեր, սակայն թրծած կավից, քարե և փայտե պատեր ոչ մի կառուցապատման մեջ չեն կիրառվել:

▪ Հատակի ծածկույթները դասակարգվում են չորս տեսակի՝ աղյուսե, քարե, կավե և խեցեգործական. Արաք քաղաքի պատմական կառույցներում լայնորեն կիրառվել են քարե և աղյուսե հատակները, չեն պատրաստվել քարե հատակներ:

▪ Կողային արգելանքներից՝ հորիզոնական, ուղղահայաց և թեք տախտակներից, լայնորեն կիրառվել են ուղղահայաց տեսակները, իսկ թեք տեսակը կիրառվել է միայն լանջավոր տանիքներում:

▪ Կոնստրուկտիվ միացումները բաժանվում են չորս տեսակի՝ փոքրուֆտե, լառի, լաբանդ, և կողային ծածկեր, հիմնականում կիրառվել են փոքրուֆտե և լաբանդ տեսակները, իսկ լառի տեսակը ոչ մի կառուցապատման մեջ չի կիրառվել:

2. Վերլուծելով Արաքի պատմական շենքերի դեկորացիաների կիրառման եղանակների տիպաբանական առանձնահատկությունները՝ արվել են հետևյալ եզրակացությունները:

▪ Արաք քաղաքի պատմական կառույցներում օգտագործվել է աղյուսով դեկորացիաների բազմազանությունը, այդ դեկորացիաները ինը տիպի են: Հիմնականում կիրառվել են կաղապարային և կապման եղանակները:

▪ Սալիկապատման արվեստի տեսակները Արաք քաղաքի պատմական կառույցներում չորսն են, որոնցից յոթ գույների օգտագործումը ամենալայն կիրառումն է ունեցել: Սալիկապատման բազմազանության լայնորեն կիրառումը է տեղ է գտել կրոնական կառույցներում:

▪ Գիպսային աշխատանքների կատարման եղանակները երեքն են, որոնք Արաք քաղաքի պատմական կառույցներում կլիմայական ցուրտ պայմանների պատճառով շատ չեն օգտագործվել, սակայն հազվադեպ նմուշներ կան քանդակային տեսակից:

▪ Մետաղի դեկորացիաները բաժանվում են չորս տեսակի: Արաք քաղաքի պատմական կառույցներում կիրառվել են միայն ուռուցիկ և ցանցավոր տեսակները:

▪ Փայտե դեկորացիաները Արաք քաղաքի պատմական կառույցներում կիրառվել են երկու՝ սոռառալ և ցանցավոր եղանակներով, որոնցից ցանցավորը քիչ ծախսատար լինելու և արագ կառուցման պատճառով լայն կիրառում է ստացել:

▪ Քարի դեկորացիաները Արաք քաղաքի պատմական կառույցներում կիրառվել են երկու եղանակով՝ հարթային և ծավալային, որոնցից հարթայինը կիրառվել է մզկիթներում, իսկ ծավալայինը՝ կառավարական և հասարակական կառույցներում:

▪ Արաքի պատմական շենքերի ճարտարապետության մեջ օգտագործված դեկորացիաների իրականացման եղանակներն Իսպահի ոճից են ազդվել և չեն կրում Թեհրանի ոճի ազդեցությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վեր են հանվել Արաքի կենտրոնական հատվածի պատմաշխարհագրական, լանդշաֆտային և փաստագրական տվյալները: Բացահայտվել են նրա քաղաքաշինական հորինվածքային առանձնահատկությունների սկզբունքները:

2. Արաքի պատմական հատվածի քաղաքաշինական կառուցապատումը ներդաշնակ է շրջակա միջավայրին: Բնակլիմայական պայմանները՝ ցուրտ ձմեռը և զով ամառը ձևավորել են կանոնավոր երկրաչափական կառուցապատման սկզբունքների, որոնք աջակցում են կառույցների ծավալատարածական միասնությանը:

3. Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ Արաքի պատմական հատվածը կառուցվել է Թեհրանից ուղարկած Գորջի խան իշխանի նախագծով, ունի խիստ երկրաչափական զուգաչափ հատակագիծ և առանձին թաղամաս՝ յուրաքանչյուրն իր կենտրոնով, մզկիթով, բաղնիքով, գործառույթային կատարյալ անկախությամբ, որոնց սահմանները հանդիսացել են 2 միմյանց ուղղահայաց ճանապարհները, որ մշված հանգամանքները բխում էին նախկինում Արաքի տարածքում առանձին բերդերում ապրող թշնամի 4 ցեղախմբերին տիրելու և համերաշխություն հաստատելու նպատակներից:

4. Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ պատմական հատվածի պաշտամունքային, հասարակական, բնակելի և մեմորիալ շենքերը հիմնված են ընդհանուր կառուցապատման սկզբունքների օրինաչափության վրա, այսինքն ունեն բլոկային տիպաբանություն:

5. Արաքի պատմական հատվածի կառույցների ուսումնասիրությունը ըստ շինանյութերի և շինարվեստի թույլ է տվել կատարել նրանց դասակարգումը ըստ՝ հիմքերի՝ կրային, քարե և շերտավոր, ճակատների՝ խուլ, բացվածքներով և կամարած, տանիքների՝ հարթ, թեք, գնբեթած, կոր, երդիկներով և թրոմպերով:

6. Կատարվել է Արաքի պատմական հատվածի հուշարձանների քաղաքաշինական, ճարտարապետական և ոճաբանական, ինչպես նաև օգտագործվող շինանյութերի և շինարվեստի վերլուծություն, որի արդյունքում ապացուցվել է, ի տարբերություն նախկինում իշխող կարծիքների, Իսպահանի ոճի գերակշռող ազդեցությունը Արաքի պատմական հատվածի վրա:

7. Մշակվել են գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, Արաքի պատմական հատվածի հուշարձանների վերակառուցման նպատակով, որը հիմնավորված է տիպաբանական առանձնահատկությունների վրա, բաղկացած 5 հիմնական դրույթներից՝ զլխավոր հատակագծից, հատակագծից, ճակատից, ծավալատարածական կերպարներից և ներսույթից:

Ատենախոսության բննալից հրատարակումների ցանկ

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. **Mashhadi A.** Properties of order for access points and urban axes in the historical textures of Iran (case study: the historical texture of Arak) // YAFA, Scientific articles collection, Yerevan, 2011, page 225-231.
2. **Mashhadi A.** Integration, complexity and structural stability in historical textures of Iran // YAFA, Scientific articles collection, Yerevan, 2011, page 232-237.
3. **Mashhadi A.** Properties of historical texture in Arak city concerning the compatibility with climate (Residential buildings) // YAFA, Scientific articles collection, Yerevan, 2012, page 201-207.
4. **Mashhadi A.** Harmony of light and shade in the composing forms of Arak historical fabric // YAFA, Scientific articles collection, Yerevan, 2012, page 208-213.
5. **Mashhadi A.** The architectural & typological properties of plans in design of historical monuments in Arak from Qajar period // Life Science Journal, New York, 2012, Vol 9(4), page 5929-5935.
6. **Mashhadi A.** Urban design properties in Arak old fabric from Qajar period // American Science Journal, New York, 2013, Vol 9(1), page 394-399.

АЛИ МАШХАДИ

ИСТОРИЧЕСКАЯ ЧАСТЬ ГОРОДА АРАК И КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ПАМЯТНИКОВ В ГАДЖАРСКИЙ ПЕРИОД (1796-1925ГГ.)

РЕЗЮМЕ

Город Арак, как центр провинции Марказ Ирана, находится в центре четырех междугородных осей. Город Арак состоит из четырех городских отдельных слоев: находящееся в центре города старое ядро, окружающее старое ядро городское плетение (органическое плетение), правильное плетение и приграничное плетение, которые расширились радиальной формой. На месте старого ядра города была расположена деревня под названием Дескаре, которая разрушилась вследствие нападений монголов, и вместо этого в начальный период власти династии Зендийе было построено восемь крепостей. В 1796 г. во время владычества Фатталишаха династии Гаджаров отмеченные крепости разрушились, и вместо них была построена крепость Султанабад. Сопоставление главных элементов старой крепости основано на иранско-исламской модели, которая согласуется с условиями новых времен, поскольку рынок был сердцем и осью города, и вокруг него формировались жилые постройки, а места княжеских территорий выбирались за пределами основного плетения города.

Старое ядро Арака, в отличие от большинства старых городов Ирана, с момента его основания наряду со всеми городскими составляющими и элементами проектировалось на основе предварительно разработанных программ и проекта. Предварительный дизайн старого города-крепости был основан на перекрещивающихся в виде шахматной доски сетках. Чхарсух являлся композиционным центром этого городского плетения и точкой сечения главных осей. Любая дорога, выходящая из этого центра, ведет к одним из главных ворот города, которая, в свою очередь, доходит до главных дорог региона. Вследствие пересечения этих дорог старый город-крепость разделен на четыре квартала. Иерархия композиции старого города-крепости осуществлена на одной стороне площади Арг, где находятся конечная часть рынка и квартал, называемый Северной стеной. Преобладающая часть исторических памятников расположена на территории старого города-крепости, так что 80% исторических памятников находятся внутри

старого города-крепости, а 20% - за его пределами. Согласно историческим документам, в Араке памятники, принадлежащие гаджарскому периоду, можно разделить на шесть групп: религиозные, общественные, жилые, монументальные, постройки общественного назначения и маленькие архитектурные постройки. Архитектурный план построек осуществлялся двумя типами: в 1-ом типе структура постройки блочная, а во 2-ом типе - в виде центрального двора.

С точки зрения иерархии, в преобладающей части построек основные территории находятся на одной стороне двора в направлении симметрических осей. Все постройки имеют, по крайней мере, одну ось, перпендикулярную симметрии относительно улицы, которая начинается с входной точки и доходит до главной территории. В преобладающей части построек центр композиции находится в точке пересечения осей симметрии и совпадает с геометрическим центром территории. Центр композиции фасадов находится симметрично осям, и на этих точках фасады подчеркнуты.

В гаджарский период, с точки зрения специфики архитектурной композиции построек, наблюдается некоторый стиль, который перенял влияние с одной стороны, стиля города Исфагана периода Сефевянов, а с другой стороны - западного стиля. Поскольку этот стиль впервые был применен в городе Тегеране, поэтому он называется тегеранским стилем. Так как город Арак был построен на основе предварительно разработанных проектов и модели, то как на этапах городского и архитектурного дизайна и планирования, так и на этапах строительной техники и декоративного убранства с учетом классификации зданий были проектированы и осуществлены своеобразные модели, руководствуясь специальными стилями. Во всех группах архитектурных построек, в том числе религиозных, общественных, жилых, монументальных зданиях общественного назначения и маленьких архитектурных постройках, имеется свой специальный стиль, что можно обобщить для всех построек, относящихся к данной группе.

Проведен градостроительный, архитектурный и стилистический анализ памятников исторической части города Арака, а также строительного искусства и использованных стройматериалов, в результате чего доказано, что в отличие от господствующих ранее мнений, влияние стиля Исфагана преобладает в исторической части города Арака.

ALI MASHHADI
ARAK OLD FABRIC AND COMPOSITIONAL FEATURES OF ITS MONUMENTS
FROM QAJAR PERIOD (1796-1925)
SUMMARY

The dissertation is titled: "Arak Old Fabric and Compositional Features of its Monuments From Qajar Period". Beside the foreword the text consists of three chapters, bibliography including 83 publications in Persian and other European languages. The Appendix consists of 87 tables.

In the dissertation, historical & geographical data of Arak old fabric and its compositional features have been analyzed.

Arak city as the capital of central province is located in the center of four intercity roads. The city of Arak consists of four urban layers including the old core in city center, the fabric around the old core (organic fabric), regular fabric and the margin-settlement fabric which have been developed in a radial manner. At the place of the old core, there used to be a village which was named Deskare which was destroyed during the Mogul attack and in the beginning of Zandie era, eight castles were constructed at this place. In 1796 A.D & in the rule of Fathali shah of Qajar, The castles were demolished and Soltanabad citadel is built instead. The composition of the main elements in the walled city has been based on an Iranian & Islamic pattern (Bazaar at the center of the walled city, residential buildings around Bazaar & the governmental space outside the main fabric). The old core of Arak, unlike many old cities of Iran, has been designed wholly and constructed with a pre-determined planning. In the original plan of the walled city, the network has established cross-checkers. Charsuq is the composition center of the fabric & is intersection of main axes. Every axis ends in one of the main gates and finally the main roads of the region. As a result of this intersection, the walled city has been divided into four main quarters. The hierarchy of the composition is in behalf of the Arg square where is located at the end of Bazaar. Town planning in the walled city is based on a modular network. Construction in Arak old fabric is consistent with

environment climate like cold winters and cool summers have affected the formation of Construction principles that caused Volumetric structural unity.

The maximum density of Qajar monuments lies within the walled city so that 80% of Qajar monuments are situated inside and the remaining 20% are outside the boundaries of the walled city. Based on existing documents, monuments belonging to the Qajar period in Arak are divided into 6 groups including religious, public, residential, memorial, communal buildings and minor architectural forms. In each group, the buildings are divided into several types. Plans are mainly of two types including blocked & courtyard composition. In Qajar period, a style in compositional & building technique features of architectural monuments begins that on the one hand has been influenced by Isfahan style in Safavid period and on the other hand It is an adoption of the western method. Since the style was formed in Tehran city for the first time thus it has been named after Tehran style. Because the Arak city has been built based on a pre-determined pattern, Therefore, not only in the steps of planning, urban design and architecture, but also in the stage of decoration and building techniques, exclusive patterns have been designed and implemented by following the certain styles and considering the buildings typology. Decoration and building technique in every group of architectural monuments including religious, public, residential, communal, memorial buildings and minor architectural forms have particular style and can be extended to all buildings belonging to a group.

As a result of research, it has been revealed that religious, communal, residential & memorial buildings have been built based on construction principles. As an example, most of them are of blocked typology.

Urban design, Architecture & technique features in Arak old fabric have been compared with Isfahan and Tehran styles. It has been proned that unlike previous theories, Isfahan style has been the greatest impact on Arak old fabric.



